



«Նոր ժամանակի կրթություն» ՀԿ

**ՀԵՐԹԱԿԱՆ ԱՏԵՍԱԿՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ
ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԴԱՍԸՆԹԱՑ**

ԱՎԱՐՏԱԿԱՆ ՀԵՏԱՉՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Հետազոտության թեման՝ Ընտանիքի հոգեբանություն, կոնֆլիկտներ

Առարկան՝ Հայոց լեզու և գրականություն

Հետազոտող ուսուցիչ՝ Անահիտ Հմայակի Լալայան

**Ուսումնական հաստատություն՝ Անդրանիկ Մարգարյանի անվան
թիվ 29 ավագ դպրոց**

Երևան 2023

Բովանդակություն

Ներածություն	3
Ընտանիքի հոգեբանություն	5
Կոնֆլիկտների տեսակներ և ընտանիքում հաճախ հանդիպող կոնֆլիկտներ	7
Այլ Շիրվանզադեի ստեղծագործություններում ընտանկեան կոնֆլիկտների հիմնական պատճառները	11
Այլ Շիրվանզադեի ստեղծագործություններում կերպարների հոգեբանական վերլուծություն	15
Եզրակացություն	20
Օգտագործված գրականության ցանկ	21

Ներածություն

Այսօրվա արագ զարգացող աշխարհում ժամանակին համընթաց քայլերը դարձել է հրամայական: Նույնքան կարևոր է ստեղծագործությունները այնպես հրամցնել սովորողներին, որ նրանց համար լինի գրավիչ, հետաքրքիր, զարգացնի վերլուծական միտք: Դրա հետ մեկտեղ մոտիվացնի աշակերտներին կատարել կերպարների վերլուծություն և ընձեռի հնարավորություն իրենց կարծիքը արտահայտելու:

Այս հետազոտական աշխատանքի **բացառիկությունը** ընտրված թեմայի խորությունն է: Քանի որ թեման շատ արդիական է և վերջին շրջանում մեծ թափով զարգանում է: Այժմ, նույնիսկ վաղ հասակից, մարդիկ դիմում են հոգեբանի և փորձում են գտնել իրենց մեջ առկա խնդիրների, կոնֆլիկտների աղբյուրը և դրա պատճառահետևանքային կապը իրենց այսօրվա կյանքի հետ: Թեմայի մեջ մենք վեր կհանենք այնպիսի **խնդիրներ**, որոնք հանդիպում են ոչ միայն գեղարվեստական կերպարներում, այլև մեզնից յուրաքանչյուրի առօրյա կյանքում: Ուսումնասիրելու ենք Ալեքսանդր Շիրվանզադեի ստեղծագործությունները՝ կատարելով կերպարների հոգեկերտվածքի վերլուծություն:

Նորույթն այն է, որ Ալ. Շիրվանզադեի ստեղծագործությունների ուսումնասիրության ընթացքում շեղվելու ենք վերլուծության ավանդական մեթոդներից՝ կիրառելով կերպարների անհատական խորը հոգեբանական վերլուծություն՝ համեմատելով այն ժամանակի հերոսներին այսօրվա «homo sapiens» -ի հետ:

Վերջնարդյունքում աշակերտը ձեռք է բերում ինքնուրույն վերլուծելու, քննադատելու, ընտանեկան արժեքները կարևորելու և սեփական արժեքային համակարգը վերանայելու հնարավորություն:

Հետազոտական աշխատանքի **նպատակներն են՝**

- վերլուծական-քննադական մտածողության ձևավորում
- աշակերտին դիտարկել որպես սոցիոլոգի կարևորագույն անդամի, ով ունի ընտրելու, վիճելու, չհամաձայնելու և քննադատելու իրավունք

- սովորողներին ներգրավել խմբային <<ուղեղային գրոհի>> աշխատանքի մեջ:
- ինտերակտիվ հարց ու պատասխանի շնորհիվ գրավել աշակետների ուշադրությունը և բարձրացնել ուսուցման արդյունավետությունը:

Հետազոտական աշխատանքի խնդիրներն են.

- կարողանալ այնպես մատուցել ստեղծագործությունների վերլուծական հատվածը, որ աշակերտների հոգեբանական կամ ընտանեկան նմանօրինակ խնդիրների դեպքում չնեղացնել կամ չվիրավորել որևէ մեկին
- խմբային հետազոտական աշխատանքների մեջ ներգրավել տարբեր կրթական ցենզ ունեցող աշակերտների, որի ընթացքում կկատարվի գիտելիքի փոխանակում
- նոր նյութը այնպես մատուցել, որ սովորողների մոտ առաջանա անհագ ցանկություն տվյալ մեթոդով վերլուծություն կատարելու:

Ընտանիքի հոգեբանություն

Ընտանիքը հասարակության գլխավոր ինստիտուտներից մեկն է: Այն բոլոր ժամանակներում գտնվում է բոլորի ուշադրության կենտրոնում: Ինչպես կասեր Մուրացանը. «Ազգերի զորությունը ընտանիքի մեջ է: Չորավոր է այն ազգը, որ ունի զորավոր ընտանիք, սիրով, միությանը, առաքինի և հավատարիմ կենակցությամբ ապրող ընտանիքներ... Ով որ կամենում է զորավոր տեսնել յուր ազգը, և հաղթող՝ հայրենիքը, նա ամենից առաջ ընտանիքները պետք է ինամե...»¹: Սակայն, այժմ, ընտանիքը, որպես ինստիտուցիոնալ կառույց, անընդհատ գտնվում է փոփոխման և զարգացման նոր փուլում: Եթե նախկինում ավանդական ընտանիքի հիմքում մենք դիտարկում էինք հայրիկ, մայրիկ և երեխա գաղափարը, այժման ընտանիքը որպես մոդել փոխել է իր կառուցվածքը և ժամանակի հրամայականով, մենք չենք կարող և չպետք է զարմանանք, խառնվենք կամ քննադատենք որևէ մեկի ընտրությունը, եթե դա չի համընկնում մեր սեփական կարծիքի, մենթալիտետի կամ ազգային հոգեկերտվածքի հետ:

Ընտանեկան հարաբերությունների հոգեբանությունը սկսվում է մարդու հարաբերությունների կարիքից: Մեզանից յուրաքանչյուրն ունի հարաբերությունների կարիք կյանքի ընթացքում :

Հարաբերությունների սկզբում մենք կարող ենք հաշվի չառնել զուգընկերոջ անձի ներքին կառուցվածքը, ինչպես նաև մեր սեփական կառուցվածքը: Ամուսնության մեջ ապագայում շատ հիասթափություններ կապված են դրա հետ: Հարաբերությունների հետ կապված խնդիրներ առաջանում են, երբ զույգը սկսում է միասին ապրել և պարտավորություններ են ստանձնում միմյանց հանդեպ:

Զգիտակցելով դա, ստեղծելով ընտանեկան միություն, երեկվա սիրահարները ներխուժում են միմյանց «terra incognita» տարածք: Պատկերավոր ասած՝ մենք ընկնում ենք միմյանց հոգիների ամենախոր

¹ Մուրացան, <<Քնորգ Մարգարետունի>>

ջրերը, որոնք կարող են լցված լինել անցյալի տրավմաներով, հիշողության մեջ դրոշմված խոցող դրվագներով: Այս շփումը կարող է այնքան ցավալի լինել, որ մարդիկ ցանկանում են հեռանալ դրանից՝ ընդհուպ մինչև հարաբերությունների խզում (բաժանություններ):

Ընտանեկան հարաբերությունների հոգեբանությունն օգնում է մեզ հասկանալ հարաբերություններում առաջացող դժվարությունները: Ցանկացած զույգի կյանքում գալիս է մի պահ, երբ զուգընկերները առերեսվում են մեկ այլ անձի հետ՝ որպես ամբողջություն՝ թե՛ լավ, թե՛ վատ կողմերով և դրսևորումներով: Մենք բարդ ենք. մարդու անձի ներքին կառուցվածքը պարունակում է և՛ օպտիմալ փորձ, և՛ փորձառությունների մերժողական և թշնամական փորձ, որը առաջացնում է դժգոհության և կարոտի զգացում: Երբեմն չընկալելով միմյանց ներքին կառուցվածքը, հարաբերությունները սկսում են անկում ապրել և առաջանում են կոնֆլիկտներ:²

Ընտանեկան կոնֆլիկտներն ու վեճերը երկու հիմնական աղբյուր ունեն. առաջինը վերաբերում է մեր բնության և անհատական պատմության առանձնահատկություններին, իսկ երկրորդը մեր վրա հարաբերություններում միմյանց ազդեցության հետևանք է:

² https://golenevalada.ru/blog/konflikty-semeynykh-par/?fbclid=IwAR0vHC5V_33hIRwdiRO5gXFhf0pQ4mB7bCuAsrVTRTp1_G025gFnMbgIQ6k

Կոնֆլիկտների տեսակներ և ընտանիքում հաճախ հանդիպող կոնֆլիկտներ


«Կոնֆլիկտ» բառը ծագել է լատիներեն *conflictus*՝ բախում բառից և կարելի է բնութագրել որպես մարդկանց շահերի, նպատակների, արժեքների ընկալման տարբերություններով պայմանավորված անհամաձայնություն և համապատասխան հարաբերությունների գործողությունների դրսևորում:

Կոնֆլիկտին նախորդում է կոնֆլիկտային իրավիճակը, որը բաղկացած է կոնֆլիկտի կողմերից, կոնֆլիկտի օբյեկտից, այսինքն՝ անհամաձայնության պատճառից:

Կառավարման ժամանակակից տեսությունները կոնֆլիկտների խնդրին ցուցաբերում են այլ մոտեցում. կոնֆլիկտները կազմակերպություններում բաժանում են 2 խմբի՝ դիսֆունկցիոնալ (ոչ կառուցողական) և ֆունկցիոնալ (կառուցողական):³ Շատ դեպքերում կոնֆլիկտները ունենում են կառուցողական բնույթ: Այդ դեպքում կոնֆլիկտների զարգացումն ուղեկցվում է տարբեր դիրքորոշումների համաձայնությամբ, փոխադարձաբար միմյանց հասկանալու ցանկությամբ: Ցանկացած կոնֆլիկտի արդյունավետ կառավարման համար անհրաժեշտ է պարզել կոնֆլիկտների առաջացման հիմնական պատճառները, ձևերը, զարգացման ընթացքը և իհարկե տիրապետել դրանց կառավարման մեթոդներին:

Համաշխարհային գրականության մեջ կոնֆլիկտները ընդունված է բաժանել 4 հիմնական ձևերի՝ ներանձնային, միջանձնային, անձի և խմբի միջև, և միջխմբային: Կոնֆլիկտի ամենատարածված ձևը միջանձնայինն է, որը ավելի շատ հոգեբանական բնույթ ունի: Եթե մենք կոնֆլիկտը դիտարկում են մակրոմակարդակում, ապա այն ունի հետևյալ տեսքը՝

³ Յու. Սուվարյան, «Մենեջմենթ», գլուխ 17, Կոնֆլիկտների էությունը և ձևերը, էջ 323



Ինչպես երևում է աղյուսակում, մակրոմակարդակի կոնֆլիկտները՝ կախված իրավիճակին ցուցաբերված վերաբերմունքից, կարող են սրվել և ունենալ հետևանքներ, և հակառակը, կարող են գալ եզրահանգման: Նույնը տեղի է ունենում միկրոմակարդակում, այսինքն՝ ընտանեկան կոնֆլիկտների ժամանակ: Պետությունը մակրոհամակարգ է, որը բաղկացած է միկրոհամակարգերից (ընտանիքներից): Մակրոհամակարգում հանդիպող կոնֆլիկտները և լուծման տարբերակները նույնն են, պազապես մասշտաբները տարբեր են: Բայց եթե միկրոհամակարգը առողջ է, ապա մակրոհամակարգը ևս կլինի առողջ: Այս դեպքում ծնողի և ուսուցչի դերը շատ կարևոր է, քանի որ մեր պետության ապագան և հզորությունը կախված է ֆիզիկապես և հոգեպես առողջ սերնդից, իսկ առողջ սերունդը պետք է մեծանա առողջ ընտանիքում:

Իհարկե, ընտանեկան կոնֆլիկտները լինում են շատ տարբեր, բազմաբովանդակ և բազմաշերտ: Դրանք կարող են լինել շատ տարբեր ձևերի՝ միջանձնային, հոգեբանական և այլն: Մեզ համար այս աշխատանքի մեջ կառանձնացնենք ընտանեկան կոնֆլիկտները ծնող- երեխա հարաբերություններում, ինչպես նաև քույր-եղբայր հարաբերություններում:

ԱՄՆ-ում երիտասարդ հոգեբան Խայիմ Գինտոնը՝ հավաքելով տարբեր տարիքի երեխաներ ունեցող ծնողների խումբ, անցկացրել է ժողով «երեխայի զգացմունքները» թեմայով: Երկուժամյա քննարկման ընթացքում նա համոզել է ծնողներին, որ կա

ուղիղ կապ երեխայի հոգեվիճակի և վարվելակերպի միջև: Երբ երեխաները իրենց լավ են զգում, ապա նրանք իրենց լավ են դրսևորում:

Իսկ ինչպե՞ս է ծնողը օգնում երեխային իրեն լավ զգալ:

Պատասխանը մեկն է՝ ընդունելով երեխայի զգացմունքները:

Իսկ ո՞րն է խնդիրը. չէ՞ որ ընդունել երեխայի զգացմունքները շատ հեշտ է:

Այստեղ շատ ծնողներ բախվում են գլոբալ խնդրի: Նրանք իրապես ցանկանում են հասկանալ իրենց երեխային, բայց շատ քչերն են ընդունում երեխայի զգացմունքները, հաշվի առնում նրա կարծիքը : Ծնողների մեծամասնության մոտ կա մանկական նույն տրավման. դա է «երեխայի զգացմունքների ժխտումը ծնողի կողմից»: Ինչպե՞ս է դա արտահայտվում: Ամենապարզ օրինակը մեր առօրյայում հաճախ հանդիպող արտահայտություններն են՝ «դու դեռ շատ փոքր ես», «դու չգիտես, որն է քեզ համար ճիշտ», «դու սխալ ես»: Այս ժխտողական արտահայտությունները շեղում են երեխային իր նպատակներից՝ դարձնելով նրան անիքնավստահ, ինքնամիտ, իսկ հաճախ նաև ագրեսիվ: Եկեք քննարկենք ամենապարզ օրինակներից մեկը երեխամայր երկխոսությունից⁴

Երեխա: Մամ, ես շոգում եմ:

Մայր: Դու չես կարող շոգել. այստեղ ցուրտ է:

Երեխա: Մամ, իսկապես շոգ է, ես հանում եմ վերնաշապիկս:

Մայր: Ես քեզ ասացի, որ ցուրտ է, դու չես հասկանում....

Այս երկխոսությունը ամենապարզ օրինակներից է, թե ինչպես է առաջանում կոնֆլիկտը ծնողի և երեխայի միջև, որը երեխային ստիպում է ևս մեկ անգամ մտածել, որ նա սխալ է, նրա ամենապարզ «շոգելու զգացողությունը» սխալ է, իսկ ծնողինը միշտ ճիշտ է:

Իսկ ի՞նչ անել, եթե դուք իսկապես ցանկանում եք, որ Ձեր երեխան մեծանա լիարժեք մարդ, կարողանա լինել ինքնուրույն, հարգի իր և դիմացինի կարծիքը: Կան մի քանի բաներ, որ ծնողը, այս դեպքում նաև ուսուցիչը կարող են անել, որպեսզի երեխան/ աշակերտը սկսի վստահել Ձեզ: Դա է՝

-Լսե՛ք նրան ուշադիր. ամեն խոսքը կարևոր է:

⁴ Как говорить, чтобы дети слушали, и как слушать, чтобы дети говорили, Авт.:Элейн Мазлиш, Адель Фабер, стр. 6

-Կիսե՛ք նրա անհանգստությունները, ցույց տվե՛ք, որ նրա զգացմունքները կարևոր են Ձեզ համար:

-Կոչե՛ք իրավիճակները իրենց անուններով, եթե երեխան հասկանա, որ ինքը այդ իրավիճակում է, և դուք նույնպես այդպես եք կարծում, նա ավելի կվստահի Ձեզ:⁵

Օրինակ՝ դուք նկատել եք, որ աշակերտը հայտնվել է վատ շրջապատում, որտեղ նրան ստիպում են վատ սովորություններ ձևավորել և տարածել: Կանչե՛ք նրան առանձին, խոսե՛ք նրա հետ, ասե՛ք, որ գիտեք դա իրեն դուր չի գալիս, բայց միգուցե նրան վախեցնում են կամ ստիպում են դրանով զբաղվել: Ներշնչե՛ք նրան, որ նա կարող է հաղթահարել այդ իրավիճակը. դուք և իր ծնողը իր կողքին եք: Հավատացրե՛ք նրան, որ կարող է փոխել այս աշխարհը և կոտրել այդ շղթան: Բացատրե՛ք նրան, որ եթե նա դադարեցնի համագործակցել այդ շրջապատի հետ, նա կկոտրի այդ սխեման: Իր օրինակով կարող է մնացածին ևս օգնել վստահել իրենց ուժերին և դեմ գնալ վատ սովորույթներին:

Սա ներանձնային կոնֆլիկտի վառ դրսևորումներից է, երբ երեխան չի ուզում որևէ վատ բան անել, բայց ցանկանում է ապացուցել ծնողին, ուսուցչին կամ միգուցե համադասարանցիներին, որ ընդունակ է այդ վատ արարքին, միայն թե ցույց տա բոլորին, որ կարող է անել այդ քայլը: Իսկ ինչ կարող է անել այդ դեպքում ծնողը կամ ուսուցիչը: Մեկ բան՝ հավատացնել երեխային, որ վստահում է ու հավատում է իր ուժերին, բայց այդ ուժը պետք է ուղղորդել դեպի լավը, դրականը:

Իհարկե, ծնողի հոգեբանության մեջ կա ներդրված մի կարծրատիպ:

Ծնողը մշտապես պահանջ ունի, որ երեխան զգա իր կարիքը: Իսկ անցումային տարիքում գտնվող երեխան չի ցանկանում զգալ ոչ մեկի կարիքը, այդ թվում ծնողինը: Այս կոնֆլիկտը շատ արդիական է, և մենք ամեն օր բախվում ենք դրան՝ փորձելով օգնել նրանց ում սիրում ենք, դառնալ անկախ:⁶

⁵ Adele Faber, Elaine Mazlish, HOW TO TALK SO TEENS WILL LISTEN & LISTEN SO TEENS WILL TALK, pg. 54

⁶ «Между родителями и подростками» Доктор Хаим Дж. Гинотт, (The Macmillan Company, 1969)

Ալ. Շիրվանզադեի ստեղծագործություններում ընտանեկան կոնֆլիկտների հիմնական պատճառները

Այս գիտահետազոտական աշխատանքում որոշեցինք քննարկել արդիական ստեղծագործություններ, ինչպիսիք են՝ Ալ. Շիրվանզադեի «Քաոս»-ը, «Պատվի համար»-ը, «Արտիստ»-ը: Ինչո՞ւ են արդիական, քանի որ կերպարներից շատերը մեր այսօրվա իրական կյանքի հերոսներն են: Նաև այս ստեղծագործությունները մեծ լսարան հավաքեցին հենց իրենց Էկրանավորման շնորհիվ:

«Քաոս»-ում խիստ արտահայտված է կերպարների բարդ հոգեբանական վիճակը, ընտանքում առկա խնդիրները, խառնաշփոթ հարաբերությունները:

Քննարկենք, որն է «Քաոս»-ում ընտանեկան կոնֆլիկտի հիմնական պատճառը:

Կտակի շուրջ ծավալված գործողությունները: Իսկ ո՞րն է կտակի մեջ առկա առանցքային հոգեբանական սխալը: Իհարկե, կտակի սխալ բաժանումը: Եթե կտակում բոլոր ժառանգներն ունենային հավասար իրավունքներ, ապա դեպքերը կզարգանային այլ կերպ: Եթե ստեղծագործությունը գրվեր մեր օրերում, ապա գրողը միանշանակ հաշվի էր առնելու այսօրվա պահանջները: Նման խտրական վերաբերմունքը կառաջացներ բուռն քննարկումներ, քանի որ մեր օրերում, մենք պարբերաբար խոսում ենք հավասար իրավունքների մասին: Այսինքն կարելի է ասել, որ այն ժամանակվա «Քաոս»-ը, ամենայն հավանականությամբ այսօր կմերժվեր երիտասարդության կողմից, քանի որ կա բացահայտ խտրական վերաբերմունք մեծ և փոքր զավակների միջև, ինչպես նաև տղաների և աղջկա միջև: Բացի կտակի սխալ բաշխումից, կա ևս մեկ հոգեբանական կոնֆլիկտ:

Ծնողը բացահայտ հոգեբանական ճնշում է գործադրում բոլոր զավակների հանդեպ՝ դնելով նրանց բարդ իրադրության մեջ: Այսինքն՝ հայրը շարունակում է վերաբերվել իր զավակներին փոքր երեխաների պես՝ հաշվի չառնելով, որ նրանք արդեն հասուն մարդիկ են:

Առանձին քննարկման առիթ է Սմբատի և հոր հարաբերությունները: Այս դրվագում կա խիստ արտահայտված ռասիստական վերաբերմունք տղայի ընտրության հանդեպ: Հայրը ցանկանում է, որ տղան ամուսնալուծվի և հայ առաքելական եկեղեցու ավանդույթներով ամուսնանա հայազգի կնոջ հետ, բայց չէ որ, հենց հայ առաքելական եկեղեցին է մերժում ամուսնալուծությունները, երեխաներին լքելը: Եվ ի

վերջո, սերը չի ճանաչում ոչ տարիք, ոչ ազգություն:

Այսինքն, եթե նայենք հոգեբանական տեսանկյունից, բոլոր խնդիրները գալիս են հենց ընտանիքի գլխավորից՝ Մարկոս Ալիմյանից: Եթե նա վերանայեր իր վերաբերմունքը իր զավակների հանդեպ, ավելի մեղմ լիներ և ընդուներ, որ իր զավակներին այնքան իր ունեցվածքը պետք չէ, այլ իր աջակցությունը և հավասար վերաբերմունքը, միգուցե հերոսների ճակատագրերը այլ կլինեին: Բայց ստեղծագործության հենց սկզբում Շիրվանզադեն առանձնացնում է Ալիմյանին հետևյալ խոսքերով «Եվ ահա այսօր մեռնում է անվանի քաղաքացին, խելացի մարդը, տոկուն

վաճառականը, որ ամբողջ կյանքն անց է կացրել անդուլ գործունեությամբ, քրտինքը ճակատին, **խիղճը հանձնած երկաթե սնդուկին և հոգին գրպանը դրած:**»⁷

Այս տողերում հստակ նշմարվում է Ալիմյանի ամբողջ էությունը, մարդ, ում խիղճը վաղուց լքել է իրեն:

Չնայած, երեխաների դաստիարակության հարցում կարևորագույն տեղն ու դերը բոլոր ժամանակներում եղել է մայրիկինը, բայց տվյալ ստեղծագործության մեջ մենք նկատում ենք նաև մոր դերի թերագնահատում:

Միգուցե, եթե Ալիմյանը կնոջը ավելի շատ տեղ հատկացներ, կամ մայրը ավելի շատ լիներ երեխաների կյանքում, հարաբերությունները այլ կերպ կդասավորվեին:

Միքայելի նկատմամբ վերաբերմունքը ավելի մեղմ էր, սակայն, նրա նկատմամբ ևս կային խիստ պահանջներ, բայց քանի դեռ Միքայելը դեմ չէր գնացել հորը և նրա խնդրանքներին, դրա համար Միքայելը ստեղծագործության սկզբում ներկայացված է պարզապես դեռ չհասունացած և կյանքը վայելող երիտասարդ:

Արշակը ստեղծագործության մեջ արհամարհված է, իր դերը ընտանիքում նվաստացված է, ու շատ հավանական է, որ հենց ծնողների անտարաբերությունն է բերել Արշակին այդ վիճակին:

Գալիս ենք կրկին ընտանիքներում կոնֆլիկտների առաջացման **ամենատարածված խնդիրներին:** Դրանք են՝

-անհավասար վերաբերմունք երեխաների հանդեպ

-անտարբերություն և զգացմունքների անտեսում ծնողի կողմից

-ծնողի կողմից սեփական կարծիքը կարևորելու և այն առաջ տանելու անհագ ցանկություն:

⁷ Ալ. Շիրվանզադե, «Բաոս», 1987թվ, էջ 289

Քննարկենք նաև «Պատվի համար» դրաման: Այստեղ ևս կա ընտանիքում սուր արտահայտված կոնֆլիկտ: Ամենահոգեբանական կոնֆլիկտը թերևս հոր՝ Անդրեաս Էլիզբարյանի և դստեր՝ Մարգարիտի միջև է: Քննարկենք մի իրավիճակ, որտեղ դեպքերը այլ զարգացում կստանային: Չնայած պետք է խոստովանել, որ սյուժեն իդեալական դարձնելու համար, անհրաժեշտ կլինի սկսել սկզբից: Այսինքն, որ Մարգարիտի վերջը չլիներ այդպիսին, հոր բարոյահոգեբանական պատկերը պետք է լիներ այլ: Կոնֆլիկտի հիմնական առարկան «պատիվն» է, մի կողմից հոր, մյուս կողմից աղջկա: Բայց կա մի առանցքային բնավորության գիծ, որը «փրկեց» հորը և կործանեց աղջկան: Դա Անդրեաս Էլիզբարյանի անձնական Էգոիզմի դրսևորումն էր, որ նա մինչև վերջ չցանկացավ ընդունել իր մեղքը՝ նետելով թղթերը կրակի մեջ: Այսինքն՝ հայրը պատրաստ չէր գնալ զոհողության հանուն իր զավակի: Իսկ դուստրը ավելի համարձակ էր և բարոյական ավելի բարձր արժեքներ ուներ: Բայց, ավաղ, նրա մահով ոչինչ չլուծվեց և չփոխվեց: Ստացվում է, որ նա մահացավ հանուն ոչնչի: Բայց ցանկացած հասարակության մեջ պետք է լինեն և՛ լավ, և՛ վատ կերպարներ, որպեսզի ցանկացած բան լինի բալանսավորված:

Նմանօրինակ դեպքերի զարգացում է նաև «Արտիստը» ստեղծագործության մեջ:

Այստեղ խնդիրը մոր և որդու միջև է, երբ մայրը հանդիմանում էր նրան որպես «անպետք» զավակի⁸: Անշուշտ, մայրը սիրում էր որդուն, սակայն նա երբեք չէր ներշնչում երեխային ինքնավստահություն, ինչպես նաև չէր ցանկանում, որ տղան զբաղվեր իր սիրելի զբաղմունքով: Նույնիսկ, կա դրվագ, երբ տղան բողոքում է, որ մայրը ցանկացել է կոտրել մանդոլինան և վառարանը զցել, որովհետև թույլ չի տվել մորը մինչև լույս քնել:

Սակայն, այս ստեղծագործության մեջ բացարձակ մեղավոր կողմ գոյություն չունի: Մայրը դրսևորում էր եսամոլ հոգացողություն որդու հանդեպ, իսկ որդին ցանկանում էր անկախ լինել, և ինքը որոշեր՝ ինչ է սիրում:

Մյուս կողմից էլ մայրը ուներ մտավախություն, որ որդին կշարունակի հոր ճանապարհը և կդառնա հարբեցող:

Ստեղծագործությունների մեծամասնության մեջ մենք հանդիպում ենք նմանօրինակ դիպվածներ: Ընտանեկան կոնֆլիկտներ են առկա նաև Նար- Դոս-ի «Մեր թաղը», «Ես և Նա» ստեղծագործությունների մեջ: Օրինակ՝ «Ես և Նա»-ի մեջ խիստ

⁸ Ալ. Շիրվանզադե, «Երկեր», 1983թ., էջ. 326

արտահայտված է ընտանքում նյութական կոնֆլիկտը: Այսինքն՝ նյութականը ավելի բարձր է դասված, քան կարևորագույն արժեքներից մեկը՝ սերը:

Ա. Շիրվանզադեի ստեղծագործություններում կերպարների հոգեբանական վերլուծություն

Կերպարների վերլուծությունը կարող է շատ սուբյեկտիվ լինել, քանի որ մեզնից յուրաքանչյուրը կարող է անհատին վերլուծել իր տեսանկյունից և ելնելով իր անձնական մարդ տեսակից և մասնագիտությունից: Մենք վերլուծել ենք կերպարներ՝ ելնելով հոգեբանական պատկերի վերլուծման մեթոդներից մեկի⁹:

Դա է անհատականության գծերի վերլուծություն, որոնք են՝

- ✓ բնավորություն
- ✓ խառնվածք
- ✓ մոտիվացիա
- ✓ կարողություններ
- ✓ հուզականություն
- ✓ ինտելեկտուալություն
- ✓ հաղորդակցվելու ունակություն
- ✓ կամային հատկություններ
- ✓ ինքնատիրապետման մակարդակ
- ✓ ինքնագնահատական

Քանի որ չենք կարող, բոլոր 10 գծերն էլ առանձին վերլուծել, կանդրադառնանք ամենակարևորներին, որոնք տալիս են պատկերացումներ անհատի մասին: Դա է՝ բնավորությունը, խառնվածքը, մոտիվացիան, ինքնատիրապետման մակարդակը և ինքնագնահատականը:

Բնավորությունը կարող ենք որոշել՝ ելնելով 4 կարևոր գործոններից:

- Վերաբերմունք այլոց նկատմամբ
- Վերաբերմունք աշխատանքի նկատմամբ
- Վերաբերմունք իրերի նկատմամբ
- Վերաբերմունք ինքն իր անձի նկատմամբ:

⁹ <https://shorturl.at/bsxyA>

Խառնվածքի դասակարգումը հետևյալն է՝ *ֆլեգմատիկ* (ժլատ է հույզերի արտահայտման մեջ, ունի կայուն տրամադրություն), *խոլերիկ* (բուռն է, անհավասարակշիռ, արագ փոխում է տրամադրությունը), *մելանխոլիկ* (խոցելի է, տպավորվող, հակված է անհանգստության), *սանգվինիկ* (աշխույժ է, շարժուն, բայց չի կարող հաղթահարել ինքն իրեն, եթե աշխատանքն իրեն անհետաքրքիր ու ձանձրալի է թվում:)

Մտիվացիա. յուրաքանչյուր մարդ պետք է ունենա ինչ-որ բանի շարժառիթ՝ իր համար արժեքավոր նյութական կամ իդեալական առարկաների ընդհանրացված պատկեր:

Ինքնատիրապետման մակարդակ.

դա ձեր զգացմունքները, մտքերը և վարքագիծը կառավարելու ունակությունն է: Այն շատ սերտորեն կապված է կամային որակների և հոգեկան ինքնակարգավորման հայեցակարգի հետ:

Ինքնազնահատական.

Սա մարդու պատկերացումն է իր անհատականության կարևորության, այլ մարդկանց շրջանում իր անձի գնահատման, իր որակների և զգացմունքների, արժանիքների և թերությունների մասին:

Ինքնազնահատականը կարող է լինել ցածր, բարձր և համարժեք:

Գոյություն ունեն գնահատման տարբեր սխեմաներ, որոնց միջոցով կարող ենք կատարել անհատի հոգեբանական վերլուծություն: Դրանցից են՝ R. Kettel-ի հարցաթերթը (տես.՝ նկար 1)¹⁰, Յանս Այզենկա-ի հարցաթերթը (տես.՝ նկար 2)¹¹

¹⁰ https://psychojournal.ru/tests_online/365-16-faktorny-lichnostny-oprosnik-r-b-kettella.html

¹¹ https://psychojournal.ru/tests_online/125-lichnostny-oprosnik-gansa-ayzenka-epq.html

Фактор	Ф	Полнос отрицательный	1	2	3	4	5	6	7	8	9	10	Полнос положительный
A	3	Отчуждённость											Общительность
B	8	Низкий интеллект											Высокий интеллект
C	2	Эмоциональная неустойчивость											Эмоциональная устойчивость
E	10	Подчинённость											Властность
F	9	Пессимизм											Оптимизм
G	6	Небрежность											Ответственность
H	8	Робость											Смелость
I	7	Жёсткость											Мягкосердие
L	9	Доверчивость											Подозрительность
M	7	Практичность											Мечтательность
N	6	Прямолинейность											Дипломатичность
O	10	Спокойствие											Тревожность
Q1	10	Консерватизм											Гибкость
Q2	3	Зависимость от группы											Самостоятельность
Q3	1	Низкий самоконтроль											Высокий самоконтроль
Q4	10	Расслабленность											Напряжённость

Նկար 1՝ R. Kettel-ի հարցաթերթիկ



Նկար 2՝ Հանս Այզենկա-ի հարցաթերթը

Այս հարցաթերթերի միջոցով դուք ևս կարող եք հասկանալ, թե ինչ մարդ տեսակ եք դուք, և ինչն է անհրաժեշտ փոխել, որպեսզի դառնաք ավելի հավասարակշռված և ինքնավստահ:

Հիմա վերլուծենք «Զաոս»-ի առանցքային կերպաներներին:

Մարկոս Ալիմյան. բնավորությամբ կոպիտ, ինքնասածի, այլոց զգացմունքները հաշվի չառնող, աշխատանքը առաջնային համարող անձնավորություն: Խառնվածքով ֆլեգմատիկ, մոտիվացիան է դիզել հարստություն, ինքնատիրապետման մակարդակը բարձր է, ինքնագնահատականը՝ ևս:

Սմբատ Ալիմյան. բնավորությամբ հուզական, մտածկոտ, ստեղծագործության սկզբում այլոց զգացմունքները կարևորող, աշխատանքը, իրերը, մարդկանց առաջնային համարող անձնավորություն: Խառնվածքով և՛ ֆլեգմատիկ, և՛ խոլերիկ: Մոտիվացիան է այնպես անել, որ բոլորի համար լավ լինի, ինքնատիրապետման մակարդակը բարձր է, ինքնագնահատականը՝ համարժեք: Սակայն հրդեհի տեսարանում դրսևորվում է եսասիրություն և շահամոլություն: Այսինքն՝ նա նմանվում է իր հորը:

Միքայել Ալիմյան. բնավորությամբ ավելի անտարբեր է ամեն ինչի նկատմամբ, բացառությամբ իր անձի: Տիպիկ սանգվինիկ: Ստեղծագործության սկզբում կա մոտիվացիայի բացակայություն, քանի որ վստահ է, որ ունեցվածքը իրեն է հասնելու: Ինքնատիրապետման մակարդակը ցածր է, ինքնագնահատականը՝ համարժեք:

Արշակ Ալիմյան. բնավորությամբ անտարբեր: Խառնվածքով մելանխոլիկ է: Մոտիվացիայի բացարձակ բացակայություն, քանի որ իրեն չի համարում տան անդամ, մատնված է անտարբերության: Ինքնատիրապետման մակարդակը ցածր է, ինքնագնահատականը՝ ցածր:

Ի դեպ, հոգեբանները նշում են, որ ցածր ինքնատիրապետման մակարդակ և ցածր ինքնագնահատական ունեցող մարդկանց ավելի հեշտ է կառավարել: Այդ իսկ պատճառով մենք հաճախ կարող ենք ականատես լինել, որ մարդկանց աշխատանքը փորձում են արժեզրկել, որպեսզի ստանան իրենց ցանկալին:

Վերլուծենք նաև «Պատվի համարը»-ը դրամայի առանցքային 2 կերպարներին:

Անդրեաս Էլիզբարյան. բնավորությամբ եսասեր, խաբեբա, ուրիշի զգացմունքները հաշվի չառնող անձնավորություն: Խառնվածքով ֆլեգմատիկ, այսինքն՝ ունի սառը զգայական մակարդակ, բայց երբեմն դրսևորում է սանգվինիկին հատուկ գծեր. աշխույժ է, եթե դա իրեն հետաքրքիր է: Մոտիվացիան աշխատել շատ գումար, անկախ նրանից, թե դա ինչ մեթոդներով կլինի, ինքնատիրապետման մակարդակը բարձր է, ինքնագնահատականը՝ ևս:

Մարգարիտ. բնավորությամբ հուզական կերպար է, քանի որ հաշվի է առնում և՛ շրջապատի կարծիքը, և այլոց զգացմունքները: Արդար է իր նպատակների և զգացմունքների մեջ: Խառնվածքով ավելի մելանխոլիկ է, բայց ունի կտրուկ խոլերիկի դրսևորումներ: Մոտիվացիան գտնվում է բարձր զգայական մակարդակում: Դա է՝ ապրել հանուն ուրիշների բարեկեցության: Ինքնատիրապետման մակարդակը միջին և ցածր է, ինքնազնահատականը՝ ցածր:

Նմանօրինակ կերպարների վերլուծությունը շատ կարևոր է կազմակերպել նաև խմբային աշխատանքների ժամանակ, որպեսզի աշակերտները կարողանան արտահայտել իրենց կարծիքը, զուգահեռներ անցակնեն կերպարների միջև, ինչպես նաև կարողանան վերլուծել իրենք իրենց, նաև իրենց դասընկերներին, ինչը կբարձրացնի մոտիվացիան և ընկալման մակարդակը:

Եզրակացություն

Առողջ հասարակության հիմքը առողջ սերունդն է, սակայն, հոգեբանները փաստում են, որ երեխայի ճիշտ հոգեկերտվածքի ձևավորման վրա ազդում է ոչ միայն դաստիարակությունը, որ նա ստանում է տանը և դպրոցում, այլև շատ կարևոր է նաև այն սոցիումը, ազգը, որտեղ նա մեծանում և կոփվում է որպես մարդ: Ցավոք, վերջին շրջանում, ատելության խոսքը, բացարձակ անտարբերությունը շուրջը կատարվող երևույթների նկատմամբ այնքան է շատացել, որ շատ դժվար է դարձել կառավարել և հասկանալ, թե ինչ ենք մենք ի վերջո ցանկանում:

Սոցիալական հարթակներից մեկում կատարված հարցման արդյունքում, որին մասնակցել են 13-30 տարեկան 33 քաղաքացիներ, պարզ է դարձել, որ հարցին «Ինչի՞ց եք ամենաշատը վախենում այս պահին...», մեծամասնությունը պատասխանել է «կորցնել տունը»: Սա լուրջ հոգեբանական փոս է, որի մեջ գտնվում ենք բոլորս: Անհանգստություն, անվտանգության երաշխիքների բացակայություն, անապահովության զգացողություն: Այս գլոբալ վիճակը բերում է բազմաթիվ կոնֆլիկտների առաջացման, թե՛ ընտանիքի ներսում, թե՛ դրանից դուրս:

Ո՞րն է հանդիսանում ուսուցչի խնդիրը այս պարագայում:

Ծնողի հետ հավասար ներշնչել աշակերտներին, որ ուժեղ պետություն և հայրենիք ունենալու համար, պետք է ունենալ ուժեղ և խելացի սերունդ: Իսկ այդ ամենի հիմքը հենց ճիշտ հոգեբանությամբ դաստիարակված երեխան է: Ով պետք է իմանա որտեղ են սկսվում և ավարտվում իր իրավունքները, պետք է իմանա իր տեղն ու դերը այս հասարակության մեջ:

Այս հետազոտական աշխատանքը շոշափում է մի այնպիսի թեմա, որը կարևոր նշանակություն ունի Հայաստանի համար: Հետազոտական աշխատանքի ընթացքում եկանք այն եզրահանգման, որ կոնֆլիկտների մեծ մասը գալիս է ծնող-երեխա հոգաբանական ճիշտ կապի բացակայությունից, երբ երեխան սկսում է քիչ վստահել իր ծնողին, ինչից էլ առաջանում են կոնֆլիկտները: Իհարկե, ուսուցչի դերը կարող է ուռճացված թվալ, բայց երբեմն ուսուցիչը պետք է ստանձնի ծնողի դերը, հասցնի երեխային իր նպատակին: Իսկ եթե այդ համագործակցությունը դառնա եռակողմ, մենք կստանանք այն իդեալական տեսարանը, որը ցանկանում են ունենալ: Առողջ սերունդ, առողջ հասարակություն, առողջ պետություն:

Օգտագործված գրականության ցանկ

1. Յուրի Սուվարյան, «Մենեջմենթ», 2002 թվ.
2. Մուրացան, «Գևորգ Մարգարտունի»
3. Ալեքսանդր Շիրվանզադե, «Երկեր», 1983 թ.
4. Ալեքսանդր Շիրվանզադե, 3-րդ հատոր, 1987 թ.
5. Как говорить, чтобы дети слушали, и как слушать, чтобы дети говорили, Авт.:Элейн Мазлиш, Адель Фабер, 1980
6. «Между родителями и подростками» Доктор Хаим Дж. Гинотт, (The Macmillan Company, 1969)
7. Adele Faber, Elaine Mazlish, HOW TO TALK SO TEENS WILL LISTEN & LISTEN SO TEENS WILL TALK, 2005

Օգտագործված հղումներ

1. <https://golenevalada.ru/blog/konflikty-semeynykh-par/>
2. <https://shorturl.at/bsxyA>
3. https://psychojournal.ru/tests_online/365-16-faktornyy-lichnostnyy-oprosnik-r-b-kettella.html
4. https://psychojournal.ru/tests_online/125-lichnostnyy-oprosnik-gansa-ayzenka-epq.html